



ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

1.—Կոմիտասի նախահայրերն ու ծնողները



րականության մեջ բավականին հակասական տեղեկություններ են հաղորդվել Կոմիտասի ծնողաց, ընտանեկան վիճակի, նրա մանկության շրջանի և նույն իսկ՝ մահվան պարագաների մասին։ Նրեսուն տարիներից ի վեր, շատ մոտիկ հարաբերության մեջ գտնվելով քյոթահիացիների և Կոմիտասի բարեկամների հետ, ջանացել ենք ճշգրիտ տեղեկություններ հավաքել նրա մասին։ Այդ տեղեկությունների մի մասը անհրաժեշտ ենք համարում բերել ստորև, կարծելով որ նա կարող է օգտակար լինել հետագայում Կոմիտասի ընդարձակ կենսագրությունը կազմողներին համար։

Կոմիտասի իսկ վկայությամբ, իր ազգատոհմը՝ Սողոմոնյան ընտանիքը, և բոլոր քյոթահիացիները, Հայաստանի Գողթն գավառի Յընա գյուղից են և Քյոթահիա են գաղթել 17-րդ դարում։

Կոմիտասը ծնվել է Քյոթահիա (Կուտիկնա) քաղաքում, 1869 թվականի սեպտեմբերի 26-ին։ Մանուկյան երրորդ օրը մկրտել են երեխային և Սողոմոն անունը տվել նրան։ Նրա հայրն է Գեորգ Սողոմոնյան, իսկ մայրը՝ Բրուազի Թագուհի Հովհաննիսյանը։ Հայրը և հորեղբայր Հարությունը, որի գավակի և թոռան մոտիկ ծանոթներից ենք, Քյոթահիայի վերի թաղի Ս. Թեոդորոս եկեղեցու մեջ հայտնի դպիրներ էին։ Նրանք իրենց հնչեղ ու

գեղեցիկ ձայնով ծանոթ էին բոլոր քաղաքացիներին։

Ուշագրավ պարագա է, որ Կոմիտասի մանրը՝ Թագուհին, ոչ միայն օժտված է եղավ դրամատիկ ուժեղ ձայնով, այլև ստեղծագործել է երգերի տեքստեր, նույնիսկ հորինվել եղանակներ և երգել իր ամուսնու հետ, որ Կոմիտաս չէ մոռացել հիշել իր ինքնագրության մեջ։

Գեորգ Սողոմոնյանը, ինչպես և իր և բայր Հարությունը, արհեստով կոշիկարներ էին։ Սակայն նրանք քաղաքում մեծ համբավ շահած էին ոչ այնքան իրենց արհեստով, որքան անուշ ձայնով։ Քյոթահիացիները Կոմիտասի վաղամեռիկ մորը՝ Թագուհի Հովհաննիսյանին, ներկայացնում են որպես գեղադեմ կնոջ՝ միջահասակ խարտյաշ, կապույտ աչքերով և նուրբ դիմով գծերով, իսկ հորը՝ որպես տիպար իսկական տղամարդու։ Կոմիտասն ինքը մա առանձին հարատվությամբ հիշում է իր հոր և «ձայնեղության» մասին։

Քյոթահիայի վերի թաղի Ս. Թեոդորոս եկեղեցու ծերունազարդ քահանա Տեր Պետրոս Քյուվաճյանից 1917 թվին մեր քաղաք տեղեկությանց համաձայն, Գեորգ Սողոմոնյանը շնորհալի դպիր է եղել նույն եկեղեցու մահարուստ և գոռ բարիտոն ձայնով և իր կրկակարի արհեստը կիրառելով հանդերձ, և լավի և տոն օրերին երգելիս է եղել և հիմա մոռնա պատճառով հավատացյալ ունկնդիրներին։

Կոմիտասի մայրն էլ, Թագուհի Հովհաննիսյանը, որ տասնյոթը տարեկան հասակում ամուսնացել է Գեորգ Սողոմոնյանի հետ, և մի տարի հետո ծնել է Կոմիտասին, երգել է ո՛չ միայն գորգի աշխատանքում բազմաթիվ գործավորուհի աղջիկների հետ, այլև՝ զանազան հարսանիքներում և խնջույքներում:

Ահա այս պոետ, երաժիշտ ու երգիչ ծնողների միամոր զավակն է եղել հայ ժողովրդի հանճարեղ զավակներից մեկը, որի փոթորկալից կյանքի պատմական վեպն սկսում է փոքրիկ, թշվառ Սողոմոնով և վերջանում անմահ Մեծն Կոմիտասով:

Թագուհին մահանում է իր միամոր զավակի ծնվելուց ուղիղ մի տարի հետո, և փոքրիկ Սողոմոնը մորից որբ է մնում իր մի տարեկան հասակում: Նրա հոգսը վերցնում է հորենական տատ Մարիամը, որի մահից հետո՝ հորաքույրը, կույր Գյուլինե Տուտումը, որի մասին, դժբախտաբար, բան չի հիշում Կոմիտասը իր հիշատակների մեջ, չնայած բոլոր հասակավոր քյոթահայացիները վկայում են այս մասին:

Մի տարեկան հասակում մորից զրկված երեխայի տխուր վիճակը հնչտորեն կարելի է պատկերացնել, որքան էլ նրա մասին հոգածու եղած լինի հայրը:

Հայտնի է, որ Գեորգ Սողոմոնյանը իր կնոջ մահից հետո չի ամուսնացել: Նա չի ամուսնացել երկու պատճառով. նախ՝ չի ուզեցել իր միամյա որբ երեխայի բախտը հանձնել խորթ մոր խնամքին, մանավանդ որ իր մայրը՝ Մարիամը, հանձն է առել մեծացնել նրան, և ապա՝ նա հոգեկան անքակտելի կապերով կապված է եղել իր վաղամեծիկ շնորհալի կնոջ հետ և դրանով ցանկացել է հարգել նրա հիշատակը:

Ծիշտ տասը տարի ալրի մնալուց հետո, Գեորգ Սողոմոնյանը ևս մահացել է 1880 թ. և փոքրիկ Սողոմոնը, վաղ հասակում, մնացել է բոլորովին որբ:

Մինչ այդ, նա ավարտել էր Քյոթահայի վարի թաղի Ազգային Ս. էջմիածնի անվան նախնական դպրոցի չորս բաժանմունքն ու նեցող դասընթացը, ուր սովորել է հայերեն գրել ու կարդալ:

Սողոմոնի կյանքի ողբերգությունը սկսել է հինգ-վեց տարեկան հասակից, երբ իր հոր զբաղվածություն և ազգականների անհոգության պատճառով, նա փողոց է ընկել՝ թափառական, լքված ու կիսաքաղց:

Դպրոցի և խաղի իր ընկերներից մին, վերի թաղի բնակիչ Նշան Միլտոնյանը, որի հետ ծանոթացել էինք Քյոթահայի մեջ բռնադատված սև տարիներին, պատմել է մեզ ի-

րենց դպրոցական տարիների հետևյալ մանրամասնությունները.

«Սողոմոնը խեղճուկ տղա էր՝ նիհարակազմ, վտիտ և գոմատ: Ավելի ևս խղճալի էր նրա վիճակը ձմրանը, որ Քյոթահայում նշանավոր է իր ցուրտով և սառնամանիքով: Կես կուշտ, կես անոթի՝ դպրոց էր գալիս: Նա առավոտյան իրենց տան դրան առաջ ինձ էր սպասում, ես վերի թաղից իջնում էի նրանց տունը և միասին գնում էինք դպրոց:

Մենք, բոլոր աշակերտներս, ամառվա շոգին թե՛ ձմեռվա ցրտին, դպրոցի սրահի տախտակամածի վրա նստած, սովորում էինք: Այդ ժամանակ դեռ գրասեղան գոյություն չուներ: Մենք մեր տակը փափուկ բազմոցներ էինք փռում: Սողոմոնը բազմոց չուներ և չոր տախտակի վրա էր նստում¹⁾»:

Իր որբի խեղճուկ վիճակը—նա միշտ վիզը ծռած էր և մեկամաղձոտ,— որքան էլ կարեկցության արժանի լիներ, այնուամենայնիվ, դպրոցում կային շարաճճի սղոհականեր, որոնք հաճախ վիրավորում էին նրան չնչին պատճառներով: Բայց Կոմիտասն ամենից շատ զայրանում էր, երբ «խլլոտ Սողոմոն» էին անվանում իրեն:

Երբ ինձ հետ միասին էր լինում, ես, իմ ուժերի ներած չափով, պաշտպանում էի նրան. երբեմն մենք ծեծում էինք ուրիշ տղաների, երբեմն նրանք էին ծեծում մեզ: Իմ ցույց տված «մարդասիրության» փոխարեն, ես նրանից պահանջում էի, որ երգի ինձ համար, ինչ որ բնավ չէր մերժում: Իր ձայնի հմայքը կամաց կամաց տարածվեց քաղաքի մեջ: Այլևս չէին ծեծում Սողոմոնին:

Քանի՞ քանի՞ անգամ տեսել եմ նրան քաղցած կամ վիրավորված՝ փողոցի անկյունում լաց լինելիս: Նա այնքան խղճալի էր լինում, որ ես ինքս էլ էի հուզվում: Շատ անգամ, այդ վիճակում, խուսափում էր տուն գնալուց:

Հակառակ այն բանի, որ նա երգում էր թե՛ կեկղեցում և թե՛ փողոցներում, ու մեծ հետաքրքրություն արթնացնում իր փոքրիկ անձի շուրջը, այնուամենայնիվ, շարունակում էր նրա թշվառ թափառական վիճակը: Նա գիշերները հաճախ քնում էր հանրային վաղարաններում, որոնք Քյոթահայի մեջ հայտնի են «Չամաշրհան» անունով: Քանիցս, կես գիշերին, բարեսիրտ մարդիկ այդ «Չամա-

1) Այս առթիվ Կոմիտասը տարիներ հետո իր լսարկամներին ասել է. «Կյանքումս երկու քան չեմ կարողացած մոռանալ, մեկը ծննդավայրիս Ազգային դպրոցի չոր և ցուրտ տախտակամածի վրա չորս տարի նստելու ու փողոցներում իբր որբ թափառելու, իսկ մյուսը՝ արտաքավարում թուրք հրեշ ոտովանի ծոծրակիս զարկած բռնեցրի աշավոր հարվածը»:

շրջաններին քաղաքի վրա քնած թշվառ Սողոմոնին տուն են տարել՝ կես քնած, կես արթուն վիճակի մեջ»։

Իհարկե, Քյոթահիայի նման փոքր հայ գաղութում այսպիսի դեպքեր աչքի են ընկնում։ Բոլորը ցավում են Կոմիտասի վրա և մեկ մեկ օգնում նրան։ Բայց արմատապես դեռ չի փոխվում նրա դրությունը. ո՛չ ոք սրտացավություն չի ցուցաբերում որդեգրելու և խնամելու այս խեղճ որդուկին։ Ազգականները, գտնվելով նյութական ծանր պայմանների մեջ, հազիվ կարողանում են մի կտոր հաց տալ նրան։ Ու մարդիկ, լուռ և անտարբեր, հանդիսատես են լինում խեղճ երեխայի թշվառությանն ու տառապանքին։

Բայց ահա, անակնկալ մի շրջադարձ է կատարվում Սողոմոնի կյանքի մեջ և միանգամից փոխվում նրա ճակատագրի։ 1881 թվականին, Քյոթահիայի վիճակի առաջնորդ Գեորգ Վարդապետ Դերձակյանը պատրաստվում է գնալ Էջմիածին, եպիսկոպոս ձեռնադրվելու։ Գեորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով, առաջնորդը պարտավոր է եղել իր հետ տանել մի որդ աշակերտի՝ Մայր Աթոռի Ժառանգավորաց Վարժարանում սովորելու համար։

«Քսան որբի մեջ վիճակն ինձ ընկավ և առաջնորդն ինձ Էջմիածին բերավ» — գրում է Կոմիտասը իր կենսագրության մեջ։ Այստեղից արդյոք հետեւում է, որ վիճակով է ընտրվել Սողոմոնը իբր թեկնածու Էջմիածնի Ժառանգավորաց Վարժարանին, թե եղել են այլ պատճառներ նրա ընտրության համար։ Այս մասին տեղեկությունները հակասական են։

Ըստ Քյոթահիայի հայրենակիցների արժանահավատ տեղեկությանց, թաղականությունը այս որբ տղայի մտահոգությունից ազատվելու համար, առանց վիճակի, որոշում է ուղարկել նրան Էջմիածին։ Իսկ ոմանք, ինչպես և ինքը Կոմիտասը, պնդում են, որ ընտրություն է կատարված եղել, և բախտը իրեն է վիճակվել։

Ու մի առավուտ, 1881 թվի սեպտեմբերին, Քյոթահիայի փողոցների թափառական փոքրիկ երգիչը, լուռ ու անձայն, հրաժեշտ է տալիս իր ծննդավայրին, թողնելով այնտեղ որբան քաղցը, նույնքան և դառն հիշատակներ՝ իր ծնողների վաղաժամ մահը ու իր որբի տխուր վիճակը, առանց գուշակել կարողանալու, անշուշտ, թե իրեն սահմանված է մի օր մեծ դեր խաղալ՝ դառնալով հայ ժողովրդական երգերի և հայ երաժշտության վերածնունդի ռահվիրան։

Երբ հասնում է Էջմիածին, ամսիքապես ներկայացնում են նրան Գեորգ Դ. Կաթողիկոսին։ Սողոմոնի ճակատագիրը վճռում է նրա ձայնը։ Երբ խմանում են նրա ընդունակությունը, առաջարկում են մի բան երգել. Կոմիտասը երգում է արտակարգ հուզումով և խանդավառությամբ՝ հիացնելով ունկնդիրներին։

Երբեմնի Հայրապետը, դառնալով տեսչին, պատվիրում է.

— Առանձին հոգ տարեք այս երեխային. սա սովորական ձայն չէ և կարող է սրանից արտակարգ բան դուրս գալ մի օր։

Արտասահմանում Կոմիտասի հասցրած տաղանդավոր աշակերտներից շատերը կյանքի և ապրուստի անողորմ պարտադրումին տակ, լքեցին վարպետից իրենց հանձնված թանկագին ժառանգությունը՝ երաժշտական արվեստը։

Ահա որք Սողոմոնի թշվառ մանկությունը և դիպվածի անակնկալ խաղը, որի պատճառով նա ուղարկվեց Էջմիածին և այնտեղ նրա բնածին ընդունակությունները զարգանալու պայմաններ ստեղծվեցին մինչ այն աստիճան, որ Կոմիտասը հասնելով որոշ հանգրվանի, և գիտակցելով իր կատարելիք պատմական դերը, ինքն իր ձեռքով հարթեց բոլոր խոշրնդոտները, և հաղթահարելով ամեն դժվարություն, ստացավ երաժշտական բարձրագույն դարգացում։

2.— Կոմիտասը Աղաբազարում

Դրդուրում էր սովթանների մայրաքաղաքը հայ հուշակավոր կոմպոզիտորի կատարած հեղաշրջումից։ Հմայվել էր բազմազգ և բազմալեզու Պոլսո բնակչությունը՝ որ համակրանքից, հետաքրքրությունից և անգամ նախանձից մղված, ուզում էր տեսնել ու լսել այս նորօրինակ մարդուն։

Հայ գեղջուկ երգերի հոգեթով արձագանքը դուրս էր եկել սրահների, դպրոցների, տների և խանութների շրջանակից և տարածվել Մեծ Կամուրջից մինչև շողենալիքը և ամեն տեղ։

Կոմիտասի ժողովրդական երգերի դյուխական հմայքից գերեզմարվել էին ամենքը. ո՛չ մեկ ուժ ի վիճակի չէր կասեցնելու Կոմիտասի աշխարհիկ երգերի հզոր թափը, որոնք փոթորկի նման արշավում էին քաղաքից քաղաք և վարակում ամենքին։ Երեք հարյուր հոգուց կազմված «Գուսան» երգչախումբը, իր ճոխ համերգներով, ցույց էր տվել օտարների ստեղծագործած հայ ժողովրդի թանկագին դանձերը, բազմադարյան կուլտուրան, անցյալն ու սպասմունքները։

Իզուր մոլեռանդ ու հետադիմական տար-
րերն արգելքներ էին հարուցանում նրա
սրբնաթաց ու հաղթական զննարկի առաջ: Նրա
համբավն ու համալքը ավելանում էր օրեցօր:
Հաջողության և հաղթանակի զենիթն էր հա-
սնել հայ երգի ու երաժշտության մեծ Վար-
պետը:

Ու մի երջանիկ օր մեզ ավետեցին թե՛ Կո-
միտասը դալիս է մեր ծննդավայրը՝ Աղաբա-
զար: Քաղաքի քսան հազար հայությունը
անհամբերությամբ նրան էր սպասում:

1913 թվի դարձնան էր այդ, մի գեղեցիկ
առավոտ, երբ նա հասավ մեր քաղաքը: Նա
առաջինը այցելեց մեր կենտրոնական միջ-
նակարգ դպրոցը, ուր ես այդ տարին աշա-
կերտ էի ութերորդ դասարանում:

Մաղկեփնջերով և մեծ պատիվներով ըն-
դունվելուց հետո, նա մի քիչ հանգստացավ
և ապա սկսեց այցելել դասարանները:

Մենք անհամբեր էինք ժամ առաջ ողջունե-
լու հայ նշանավոր երաժշտագետին, որի մա-
սին առասպելական պատմություններ էինք
լսել:

Եվ ահա, մեր ուսուցիչների շքախմբի հետ,
ներս է մտնում մի վարդապետ՝ կես աշխար-
հական և կես եկեղեցական տարազ հագած:
Պարզապես մի հասարակ, սովորական
մարդ:

— Մի՞թե սա է Կոմիտասը, — հարց ենք
տալիս աշակերտներս միմյանց, զարմացա-
կան հայացքներով և գրեթե հիասթափված:

Նա իր սքեմի վրա հագել էր քաղաքացու
սև վերարկու և գլխին էլ մի կլոր գլխարկ էր
դրել: Մի քիչ կարճահասակ, նիհարակազմ,
դժգույն դեմքով և փոքրիկ ցանցառ միտքով
մի մարդ՝ որի, սակայն, ամենից հատկա-
նշական մասը աչքերի խորաթափանց նայ-
վածքն էր:

Նա ժպտում էր հայրական քաղցր ժպի-
տով: Չգիտեմ ինչո՞ւ ես այդ ժպտի մեջ թաղ-
ված արցունք նշմարեցի, մի խորունկ վիշտ,
թախիժ՝ որ նրա բովանդակ դեմքի արտա-
հայտության հետ ներդաշնակվում էր: Իմ
հայացքով ու կարծիքով, նրան շատ էր սա-
ղում տրտմությունը և դառը ժպիտը:

Կոմիտասը քաղաքացու նման բարեվեց
մեղ:

— Բարեվ ձեզ, բալիկներ...

Մեր տներն էր նրան ներկայացրեց մեզ
պատշաճ խոսքերով՝ թե նա հասարակ եկե-
ղեցական չէ, այլ քաջատիկ շնորհներով օժ-
տված մի գիտնական, բանասեր և երաժշտա-
գետ, որի նպատակն է՝ հայ դարավոր երգն
ու երաժշտությունը զտել, մշակել և ծանո-
թացնել օտարներին: Կոմիտասի տաղանդն
ու կոշտը հատկանշող բացատրությունները
մենք լսում էինք ջղադրգիռ անհամբերու-

թյամբ: Մենք սպասում էինք, որ Կոմիտասը
երգեր կամ խոսեր:

Ու, վերջապես, նա սկսեց խոսել: Անցնող
երեսունը վեց տարիները նրա խոսքերի մի
բառն իսկ անկարող եղան խել իմ հիշողու-
թյունից:

— Բալիկներ, դուք զավակներն էք մի
ստեղծագործ ժողովրդի, որ ունեցել է երա-
ժշտական դարավոր կուլտուրա և արտա-
դրեց է թանկագին գանձեր, որոնց նմուշնե-
րից ես այժմ ձեզ համար պիտի երգեմ: Ես
եկել եմ հատկապես ձեզ ծանոթացնելու այդ
գանձերի հետ և կազմելու այստեղ ևս մի
երգչախումբ՝ եթե, անշուշտ, հնարավոր լինի
այդ: Ես մի քանի շաբաթ պիտի մնամ ձեզ
մոտ՝ ուսումնասիրելու ձեր զավառի ժողո-
վրդական երգերն ու երաժշտությունը: Այժմ
ես պիտի երգեմ ձեզ համար սիրով և հա-
ճույքով:

Ու սկսեց երգել հռչակավոր «Կանչե
կոտմակ»:

Մենք պատանի էինք, բայց խորապես
զգում էինք նրա ձայնի և երգեցողական ար-
վեստի գեղեցկությունը: Երբ նա ավարտեց
երգը, ամբողջ դասարանը, գլխահակ և հուզ-
ված, արտասովոր էր, մոռանալով նույնիսկ
ծափահարելը:

Ինքն էլ հուզված էր:

— Էլի՞ երգեմ, բալիկներ, — հարցրեց նա
մեզ քաղցր ժպիտով:

Մենք ծափահարեցինք ուժգին կերպով: Ու
նա երգեց «Անտունի»:

Ո՛չ մի մարդկային սիրտ չէր կարող դիմա-
նալ այս երգին, որի մեջ Կոմիտասն իր ամ-
բողջ սիրտը, հոգին և գագաղամներն էր խառ-
նել: Երգի ողբազին բառերն ու եղանակը,
նրա դրամատիկ բարիտոն ձայնի հնչելը,
բայց կերկերուն շեշտը, մեզ մոլորում էր այն-
պիսի խորը ապրումներ, որոնց անծանոթ
էր մեր դեռատի հոգին:

Խանդավառված էինք՝ բայց հուզված: Ու-
րախ էինք, բայց միաժամանակ արտասովոր
էինք: Նա պարզապես այնպիսի և փուկ էր
բերել մեր հոգեկան աշխարհ:

Արցունքոտ աչքերով դարձյալ ծափահա-
րեցինք:

Այս անգամ սկսեց առանց հրավերի եր-
գել:

— Հիմի կարգը ձե՛րն է, — ասաց նա վեր-
ջացնելուց հետո և խնդրեց, որ մեզանից մե-
կը նախ մի մեներգ երգի, և ապա ամենքս
խմրով երգենք:

Բայց ո՞վ կարող էր համարձակվել նրանից
հետո երգելու:

Մեր գրաբարի ուսուցիչը իսկույն ցույց
տվեց իր գրաբարագիտությունը:

— Վարդապետ, «Ի ծագել արեգակն, կորնշին աստեղք»:

Բայց Կոմիտասն ուզում էր լսել մեր ձայնը, իմանալ երգի հանդեպ մեր ունեցած սերը, շնորհքը և հետաքրքրությունը: Ու պնդեց իր խնդրանքի վրա:

Հանկարծ տնտրենք ինձ նայեց և հրամայեց երգել «Ո՛հ, ի՛նչ անուշ»:

Ես վարանեցի: Վարպետը հասկացավ իմ վարանման պատճառը, դրա համար էլ մոտեցավ ինձ և ձեռքը ուսիս վրա դնելով՝ հարցրեց.

— Քո անունն ի՛նչ է:

— Հրամստ, պատասխանեցի ես:

— Ուրեմն, եվ գեղեցիկ ձայն պետք է ունենաս դու: Եթե «Ո՛հ, ի՛նչ անուշ»ը անուշ երգես, դու արդեն կլինես իմ աշակերտը, — կատակեց նա:

— Շուտ, կսպասե՛նք, — խուլ և ռեգային տհաճ ձայնով գոչեց տնտրենք:

Ու ես, երջանիկ դժբախտս, սկսեցի երգել հուսահատ քաղցկյամբ:

Բայց ամբողջ մի կվարտա բարձր էի սկսել:

Ու պատահեց այն, որ ես արդեն գուշակել էի:

«Հայրենյաց հովիվ»ի ամենաբարձր ձայնանիշի վրա իմ ձայնը դարձանեց ինձ, և կոկորդիցս դուրս եկավ դանակի տակ մորթվող գառնուկի աղափաղված մի խեղդուկ և հուսահատ ճիւղ, որ ընդհանուր ծիծաղի առիթ տվեց:

Իմ ընկերները ծիծաղում էին բարձրաձայն: Տնորենը սպառնական նայում էր ինձ, իսկ Կոմիտասը ժպտում էր հայրական բարի ժպիտով:

Ես չկարողացա շարունակել, այլ սկսեցի պարզապես լալ:

Երեկվա նման դեռ հիշում եմ՝ թե ի՛նչպես վարպետը մոտեցավ ինձ և ձեռքը իմ մազերի մեջ մխրճելով, ասաց.

— Սիրուն ձայն ունես, բալիկս, բայց ուրիշ անգամ ավելի ցածրից պետք է սկսես:

Վարպետը ամսիջապես փոխեց մթնոլորտը:

— Բալիկնե՛ր, ես ուզում եմ լսել ձեր որեւի մեկ փափագը և հետաքրքրությունը երաժշտական հարցերի մասին:

Նոր ոգեվորություն ստեղծվեց:

Ու ես, ոտքի կանգնելով, հարց տվեցի.

— Վարդապետ, կուզե՞ինք իմանալ, թե ձեր կյանքի մեջ առաջին անգամ ի՛նչ էք երգել:

Ուսուցիչները ուրախ տրամադրությամբ իրար նայեցին: Տնորենի խոժոռ դեմքի վրա թեթև ժպիտ երևաց: Իսկ մեր գրաբարի ուսուցիչը մեջ ընկալ իր գրաբարով, ասելով.

— «Բազումք են կոչեցեալք՝ սակաւք են ընտրեալք». այնպես չէ՞, Հայր Սուրբ:

Հանկարծ մոռյվեց Կոմիտասի լուսաշող դեմքը: Դառն ժպիտը տխրության փոխվեց: Երթունքներն սկսեցին դողդողալ: Նրա խոնավ թարթիչները վրա-երեվաց արցունքի մի խոշոր կաթիլ: Ամենքս, լուռ և հուզված, նայում էինք նրան:

Ի՛նչ էր պատահել Վարպետին: Հոգեկան ի՛նչ տազնապի մեջ էր նա: Ինչո՞ւ իմ անմեղ հարցումը արեկոծել էր նրան:

Ու մինչ այդ հարցումների պատասխանը որոնում էինք նրա դեմքի վրա, նա իր գերագույն հուզման մեջ իսկ ժպտալով՝ սկսեց.

— Բալիկնե՛ր, գիտե՛ք, որ ես հորից և մորից որք եմ եղել և դրա համար էլ էջմիածին եմ ուղարկվել սովորելու...

Ապա կուլ տալով իր կոկորդը սեղմող արցունքները, շարունակեց, մինչ մենք հուզված ու հետաքրքրի և սրտատրոփ լսում էինք նրան:

— Իմ հորից առաջին անգամ սովորած երգի խոսքն ասեմք մի քանի անգամ.

«Շաղանակ թաղեցի օճախը,

Ցատկեց գնաց պուճախը,

Եվ, ասի, փոխիկ, գրկո՞ւմս խաղա,

Որ քեզ շտենսի մեր Ակոբ աղա...

Կատուն դրի տոպրակը՝

Նետվեց դեպի սենյակը»:

Նա հուզմունքով պատմեց իր անցյալ որբ ու թշվառ մանկության մասին՝ թե ի՛նչպես թափառում էր իր ծննդավայր Քյոթահիսարի փողոցներում և մերկ ու քաղցած գիշերում հանրային վացարաններում՝ չքված ու անպաշտպան: Նա հիշում էր երբեմնի փոքրիկ, անտեր ու որբ Սողոմոնին՝ այն պատանի թշվառ երգչին, որ երգում էր իր տխուր, աստանդական ճակատագիրը:

Մենք և՛ հուզված էինք, և՛ խանդավառված:

Այդ օրը հիշատակելի էր մեր դպրոցական կյանքի տարեգրության մեջ:

Բայց հաջորդ օրը նույնքան հիշատակելի ու պատմական օր եղավ: Ս. Հրեշտակապետ մեկնեցում հասարակական հանդիպում էր կաղամակեղապատ մեծ Վարպետի հետ: Հինգ հազարն անցնող մի հսկա բազմություն խոնվել էր եկեղեցու մեջ, սանդուխների ու լուսամուտների վրա:

Անկարելի էր կարգ ու կանոն պահպանել:

Երբ հասավ Կոմիտասի երգելու ժամը, ժողովուրդը փանդալառությամբ գագաթն էր հասել: Սկսեց նա և դրդադին ծափահարությունների տարափի տակ վերջացնելով, իր տեղը գնաց: Ներկաների ոգեվորությունը անսահման էր:

— Կո՛ւնկը, Կո՛ւնկը, — ձայնում էին ամեն կողմից:

Տգեա ու հետադեմ թաղականությունը փորձեց արգելել եկեղեցում երգել աշխարհիկ երգեր:

Ընդվզած ժողովուրդը պահանջեց շարունակել:

— Ինչո՞ւ էք արգելում վարդապետին երգել:

— Պահանջո՞ւմ ենք, իրավունք չունի՞ք արգելելու...

Խուճապի և շփոթության մատնված թաղական խորհուրդը տեղի տվեց. ժողովուրդը պարտադրեց իր կամքը:

Ու ահա, ծափահարության ու խանդավառ ցույցի մեջ, նորից բեմ է գալիս Կոմիտասը իր սովորական ժպիտը դեմքին, խոնարհվում է և ապա երգում իր «Կոռնակ»ը, որ հուզումի փոթորկով է լցնում բոլոր հայրենակարոտ պանդուխտ սրտերը:

Ծափահարություն՝ երկարատև, որոտընդոստ և խլացուցիչ:

Կոմիտասը ետ ետ է գնում և խոնարհվում: Թաշկինակով սրբում է քրտինքը և ուրախության արտասուքը: Ժողովրդի այս անօրինակ ոգեվորությունը հայ երգի հանդեպ, հուզմունքով և քաջալերական զգացմունքով է լցնում նրա սիրտը: Սովորական հանդիպում ու հանդես չէր սա, այլ մի վիթխարի ցույց՝ հայ ժողովրդի դարավոր արժեքները մեծաբող:

Համերգից հետո թաղականության «մեծապատիվ» ատենապետը իրեն է վերապահում Կոմիտասին իր տունը ճաշի հրավիրելու իրավունքը և անարգում է քյոթահիացի դպրոցին Կարապետին, որ ուզում էր իր մեծանուն հայրենակցին հրավիրել տուն:

Երկու կողմն էլ դրգռված են: Վիճաբանությունը կռվի է վերածվում:

Ես իսկույն պահալարան եմ շտապում վարպետի մոտ և հեղինակ դիմում նրան:

— Ներողություն, Հայր Սուրբ...

— Ի՞նչ է, որդիս:

— Շո՞ւտ հասեք, դուրսը կոխվ են անում:

— Է՞հ, ես ի՞նչ անեմ, բարաջան:

— Ձեզ համար են կոխվ անում, Հայր Սուրբ:

— Ի՞նչ համար:

Եվ դուրս է նետվում Կոմիտասը: Նրա տեսքը համապատասխան է կռվողներին: Խնդրի էությունը իմանալուց հետո, նա հանդարտ տալիս է իր որոշումը, ասիլքերան թողնելով թաղականության ատենապետին:

— Ատենապե՛տ էՖենդի, ես այսօր իմ հայրենակից դարբին Կարապետ աղբոր հյուրն եմ լինելու:

Այդ պատանեկան հուշերս ավելի քանդակվեցին իմ մեջ, երբ 1915 թվի ընդհանուր բռնադատվեցին, մեզ հաջողվեց ջարդերից ազատվել և ապաստան գտնել Կոմիտասի ծննդավայր Քյոթահիա քաղաքում, որ, բախտի բերմամբ, զերծ էր աքսորից, և ապրել այնտեղ ամբողջ շորս տարի, վարպետի ծնած խարխուլ տնակի մոտ կողք կողքի, և իմանալ նրա մանկական կյանքի դուր հուշերը, տեսնել նրա այցելած հիշատակելի վայրերը, եղեվներին նշանավոր անտառն ու Չամլըճայի վրանը և նրա ձեռքով փորագրված քանդակները, որոնք նվիրական հուշեր մնացին իմ մեջ՝ վարպետի անցյալ կյանքը ոգեշնչող:

